1995 ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ YEREVAN PRESS CLUB 2025

Funded by the European Union

MEDIA INITIATIVES CENTER

IMS GOOD JOURNALISM | BETTER SOCIETIES

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ - 2025

2025թ. ՀՈՒԼԻՍԻ 18-ին՝ Երևանի մամուլի ակումբի ծննդյան 30-ամյակի օրը մայրաքաղաքի «Օպերա սուիթ» հյուրանոցում տեղի ունեցավ «Մեդիայի որակի և դիմակայունության նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում սահմանված էթիկական լրագրության մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությունը:

Էթիկական լրագրության մրցանակի նպատակն է խրախուսել հայաստանյան լրատվամիջոցներում էթիկական լրագրության հետագա զարգացումը, մասնագիտական էթիկայի համընդհանուր կանոնների, Հայաստանի լրագրողների եւ լրատվամիջոցների էթիկական սկզբունքների կանոնագրի դրույթների հետևողական պահպանումը:

ԵՄԱ՝ Էթիկական լրագրության 2024-2025թթ. մրցանակակիրները

ԵՄԱ մրցանակ

Մարիա ԹԻԹԻԶՅԱՆ, EVN Report առցանց լրատվական-վերլուծական կայքի հիմնադիր և գլխավոր խմբագիր: Մրցանակը հանձնեց Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Ֆրանկ Հեսսը:

ԵՄԱ մրցանակ

Գեւորգ ԹՈՍՈՒՆՅԱՆ, «ՍիվիլՆեթ» առցանց հեռուստատեսության լրագրող: Մրցանակը հանձնեց Factor TV-ի գործադիր տնօրեն, «Մամուլի ազատության համաշխարհային օրվան նվիրված 2025 թվականի մրցանակակիր Արևիկ Սահակյանը:

ԵՄԱ անվանական մրցանակ

Ի հիշատակ ԵՄԱ բազմամյա գործադիր տնօրեն **Միխայիլ ԴԻԼՈՅԱՆԻ**՝ ԵՄԱ-ն այս տարի սահմանել էր ***«Լրատվամիջոցի գործունեությունն արդյունավետ կառավարելու համար»*** անվանական մրցանակ, որը տրվեց «Հետք» ՍՊԸ տնօրեն **Քրիստինե ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ**: Մրցանակը հանձնեց Միխայիլ Դիլոյանի այրին՝ Նաիրա Ավագյանը:

«Մեդիայի որակի և դիմակայունության նախաձեռնություն» ծրագիրն իրականացնում է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը՝ Երևանի մամուլի ակումբի, Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի, «Միջազգային մեդիա աջակցություն» (IMS) կազմակերպության հետ համատեղ՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ: